

ազատ արձակուիլը պահանջելով: Անոնք մասնաւոր թշնամութեամբ աուցուն և ուրիշներէն զրգուռած կ'ամբաստանեն Ապրոյ Զէլէպին, որ անոնց ձեռքէն ազատելու համար՝ Տէֆթերտարին մօտ ապաստանած էր: Հայք կը պահանջեն որ իրենցինքնը ազատ արձակելով միայն Ապրոն գլխատուի: Պարզ է թէ Ապրոյ մագի չափ չի նեղուիլ այս բաներէն: Վերջապէս վէզիբը ամէնօրեայ տրտունջներէն ձանձրացած հրաման կ'ընէ, թէ այն հայը որ այս խնդրոյն համար պաշտօնատուն զայ՝ բռնեն ու բանտ զրկեն: Պահակներն ալ ներսը դուրսը բռնած հայեր կը բանտարկէին ու կը ծեծէին:

Վերջապէս թագաւորին հրամանաւ խորհուրդ կը գումարուի. իւլիաններուն իսկ խորհրդով Հիւսնիրա պետը կը գլխատուի միայն, ազատ արձակել տալով չորս հայերը. բայց մունետիկի միջոցաւ ալ կը ծանուցուի որ ամէն ոք ամէն ազգէ կրնայ գնել այդ հողամասը. և հրեայ մը կը գնէ և բանջարանոցի կը վերածէ. (ասիկա քաղուած է Երեմիա Զէլէպի Քեօմիւրճեանի 2850 տողոց երկրորդ ժամանակագրութեանէ 1660 - 1662 - 1666 և 1672 ծարիներուն «Հիմունքին» Կ. Պօլսոյ «Պէյ Սղուլի» հայոց գերեզմանատանը, Հանդէս Ամսօրեայ 1911 օգոստոս, էջ 474. — Դրեց Հ. Գ. Վ. Գալեմբերեան):

Վերը յիշուած մեծ հրգեհը, որուն ընթացքին այրեցան եկեղեցիները, տեղի ունեցաւ 1660 յուլիս 14ին. անոնք էին Զիլիլ համամի Ս. Սարգիս և Հիսար Տիպի Ս. Նիկողոս եկեղեցիները: Ապրոյ շինել տուած է նաեւ իսլամիայի, Միլիվլիի, Տիմօթեայ, Մանալզի, Ֆիլիպէի եկեղեցիները: Ինքը նուիրած է նաեւ Խորենէի գերեզմանատունը:

(Շարունակելի)

Յ. ԳԻՐԵՍԵԱՆ

ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ

ԳԻՐԴ ԹՂԹՈՅԻ ՄԷՋ

(առ. Թէֆլիս 1901)

1. Ազտիմ

Ձի ազտին որ ինձ հասեալ է ի տեւրանց: Ազտիհդ ձեր և փառաւորութիւն (էջ 170-171):

Այս բառը առաջին անգամ Հ. Ալի-նեան ՀԱ 1909, 141 ծանօթացնելով՝ մեկնեց պր. azadeskari «ազատ, ինքն-իշխան» : Նորայր՝ անդ, 220 մեկնեց «չուր, փառաւորութիւն», իբր ասոր. եղզի «փառաւորեցաւ», եղզահի «փառաւորեալ» : Ըստ իս պհլ. āzātīh բառն է, որ կը նշանակէ «ազատութիւն, ազնուականութիւն» :

2. Աթունի

Յետ այսորիկ տեսանէր նոյն ծերն զՅոր-նադիոս յանկեան մի կանկնեալ և սեւ-ցեալ իբրեւ զաթունի, որ զբաղանիսն այրէ (էջ 515, նոյնը նաեւ Միխ. ասոր. էջ 209):

Արաբ. atūn «heny» բառն է (տե՛ս Գամոս, Թրք. Թրգմ. Գ. 589, 605): Զարմանալի է որ Գաբամանեանի բառաբանը գիտէ այս բառը՝ «հաց եփելու փուռ» նշանակութեամբ:

Այս մի և նոյն բառը ունինք նաեւ Անկ. գրեք հին կտ. 335. Եւ գնացեալ հանդիպեցաւ այրոյն, և ետես զի ի սովոյն մաշեալ էր և եղեալ զաթունի — Հրատարակիչը ծանօթութեան մէջ կը մեկնէ «զուցէ Թրք. zabun վտիտ», որ ինչպէս նախորդ վկայութիւնէն կ'երեւայ, ճիշտ չէ:

3. Անցիման

Եւ Սերգիս՝ որում Բարգէն անուն էր, Արդիշուկեան Խուժիկ, ի Շոշարի շահաւ:

Ողբն աշխարհ և ազգ Հայաստանայց, որ երբեմն համանման երկնի լուսապայծառ աստեղ զօթ լցեալ, այսօր նսնմացեալ կրկին խաւարաւ, մեղաց ասմմ և նեղացն՝ ամպովք ծածկեալ:

ՅՈՎՀ. Վ. ԵՐԵԱՆԱՅԻ

տանէ, ի նմին յանջմին՝ առաջի մեր ա-
մենայն Հայոց ասաց՝ թէ այդ այդպէս է
(էջ 47):

Հրատարակիչը ծանօթութեան մէջ կը
հարցնէ թէ « արդեօք Ենճիւմէն բառն է
պարսկական, որ նշանակէ ժողով »: Ան-
շուշտ այո՛: Բառը կը գտնենմ նաեւ գոր-
ծածուած Սոկր. եկեղ. պատմ. էջ 719. Եւ
արարեալ Դիոկղետիանոսի Թագաւորի ան-
ջիման, կոչէ ի միասին գումարեալ զՍիւն-
կղիտոսն ամենայն և զիշխանս »: Պրս-
ձեւն է anjuman, պհլ. anjuman կամ
hanjaman, հպրս. *hanjamana « ժո-
ղով »:

4. Բագանակեալ

Ձի գրագանակեալ մեղք տարւոյն՝ քա-
ռասուն աւուրբքս ընկեացուք յանձանց
(էջ 240):

Հրատարակիչը կը ծանօթագրէ թէ լու-
սանցքի վրայ խնդրական բառին տեղ դը-
րուած է զգարած, որուն միտքը չեմ հաս-
կընար: Բայց թագանակեալ կը նշանակէ
« հաւաքուած »: հմտ. նոյն հատուածը
Յովհ. Մանդ, Վենետ. 1860, էջ 210.
Ձ ի բազ անկեալ մեղք տարւոյն քառա-
սուն աւուրբքս ընկեացուք յանձանց (այլ
ձեռ. բագանակեալ): Արմատն է բագ « կից,
միասին, հաւաքուած », որմէ ունինք նաեւ
թագձաձն « հաւաքել, ամփոփել » Թհ. կթ.
Նիւս. կազմ:

5. Բիրկամոր

Մինչ յօրն դատաստանի առնուլ զվարձ
արդարոցն՝ որք դասին ընդ հրեշտակս, և
անապաշխար մեռելոցն ի ներքոյ տան-
ջանաց մտանել և չարչարել, զոր կոչեն
բիրկամոր (էջ 507): Այնք որք ընդ հրեշ-
տակս դասեալք են և որք ի բիրկամորն՝
միապէս փառաւորին (էջ 508):

Այս երկու վկայութիւններն ալ կը
գանուին Կոստանդին կաթողիկոսի առ
Հեթում Ա. գրած Թուղթին մէջ՝ 1246
թուին: Ըստ այսմ թիրկարոր կը ներկա-

յացնէ յետին տառադարձութիւնը լտ.
purgatorium, ֆրանս. purgatoire « քա-
ւարան » բառին: Նոյնը ունին նաեւ քեր-
քարոյր ձեռով՝ Տաթեւ. հարց. 892 և 687,
քորգարոյր անդ 553, նոյնպէս Տաթեւաց-
ւոյն Պարապմանց Գրոց լուծման մէջ (կը-
ցուած էրկրդի Պարապմանց գրոց ետեւը),
էջ 605. Յետ մահուանն հոգիք արդարոցն
առնուն զփառս իւրեանց. և մեղաւորք
զտանջանսն. իսկ միջակք ոմանք երթան
ի թիրքարոյրն և անդ քաւին և մտանն
ի փառս:

6. Բլայմ

Որ ոչ բլայթով և խարէութեամբ ու-
սուցանեն և ուսանին՝ որպէս դոքա, այլ
նշմարտութեամբ և հիմամբ առաջնոցն (էջ
509):

Յետին եւրոպական փոխառութիւն մ'է.
տեղէն կ'երեւայ որ կը նշանակէ « նենգու-
թիւն, խարէութիւն », բայց ունինք նաեւ
քրայրել « դատը պաշտպանել »: Անսիգը, էջ
19 = ֆրանս. plaidier « դատը պաշտ-
պանել », plaid « դատ, դատական ժողով »:

7. Բնասուք

Եթէ ոք կրճատեցի կամայ կամ ակա-
մայ, կամ յաւագեաց կամ ի բժշկաց կամ
յայլ զիպուածոյ իմեքէ, մի իշխեսցէ
զալ ի կարգ քահանայութեան... (զի Մով-
սէս) օրէնսդրեալ գրեաց, թէ Մի մատու-
ցանես Աստուծոյ զմոլեկանն, և մի զկըր-
ճատականն և մի զմիորձին և մի որ բնաւ-
սուքն է (էջ 329-330):

Իրարմէ բաժնելով պէտք է կարդալ մի՛
որ բնաւ ստաքն է, որով ստաք նորագիւտը
կ'ըլլայ « ներքինացեալ » կամ նման բան
մը: Իրօք ալ Զգօն, էջ 292, յայտնի կեր-
պով կը գտնենմ. Եւ ցիսրայէլ ասաց. Մի՛
եղիցի քեզ այր սուք և կին ամուլ, և
դարձեալ յաւել և ասաց. Մի՛ եղիցի ան-
ձեւ և անգաւակ յերկրի ձեռ: Ասոր հետ
հմտ. Բ. օր. է. 14 Մի՛ լիցի ի ձեզ ան-
ձեռեղ և մի՛ ամուլ. Եւ. Ի. Գ. 26. Եւ մի՛

եղիցի անհերմն և ամուլ յերկրի ըստ, Այս համեմատութիւններէն կ'երևայ որ սոսք կը նշանակէ «անծնունդ, անսերմն» և է աւ մուլ բառին արականը: Ահա ոսկեղարեան ընտիր բառ մը՝ որ մինչև հիմայ անծաւ յօթ մնացած էր:

8. Դիւռահիլովմ

Փանգի համրակ դեռածիդմն՝ որպէս աւաքի, յառաջ ընտ զարուսեակն՝ մարմնով, հոգւով, մտօք, զգայնութեամբ ծնաւ (էջ 200):

Կը նշանակէ «դեռաբուսիկ, մատղաշ» հմտ. Ոսկ. եփես. իա. Թո՛ղ աննսքի մանուկս և զարգասցի փոքր մի ճիղմ և մատաղ հասակն:

9. Դաշտկարան

Վրկանաց մարզպան Սմբատի եղբօր Գիգ իշխանի տիտղոսն է, որ թէ՛ զրիչնեւրէն և թէ՛ հրատարակիչներէն անհասկանալի մնալով զանազան աղաւաղեալ ձևերով աւանդուած է Գիրք Թղթոցի և Ուխտանէս պատմիչի մէջ (տպ. Վրդշպտ. 1871, հտ. Բ): Այսպէս՝ Ուխտանէսի մէջ՝ տր. գեզայ զաշտականի (էջ 57), ուղ. գեզդաշտկարին (էջ 58), տր. գիգաղաշտակարանի (էջ 64), բց. Դաշտկարնէ (էջ 93), տր. Դաշտկարնի (էջ 95): Գիրք Թղթոցի մէջ եւս նման աղաւաղ ձևեր (տե՛ս ցանկը): Մ'առ 380 17,026 կը մեկնէ կարան «իշխող, կառավարիչ» Դաշտ գաւառի, ուրիշն կար կարան բառ մը՝ որ կը հանէ կարել բայէն (ինչպէս իշխել-իշխան) և որմէ փոխառեալ կը զնէ վրաց. կարանի հոմանիշը՝ գործածուած Պիղատոսի անվաներականին մէջ:

10. Զորաքել

Թեպէտ և զլուրս ի նմա զանազանեալ տեղեկացաք և թէ՛ ըստ կարծեացս զորաւրեցէ, աստուածովայնուչ խոստովանութիւնք. Թո՛ղ յաշակերտեղց բանին, բայց յօտարոտաց եղեալք, ո՛ւմ ոչ սրտալիւր ուրախութիւն թուիցի (էջ 197):

Իմաստը անյայտ. Թեհա սխալ գրչուածեամբ բառ մ'է:

11. Զօշոտ

Եւ զշարաթ և զկիրակէ որոշեսցուք ճաշկաման զօշոտացն (էջ 227). Զշարաթ և զկիրակէ, յուրախութիւն պայծառութեան ի կթոց կերակուրս հրամայեմք լուծանել զօշոտացն և որովայնամուրիցն (էջ 230-231):

Զօշոտ բառը Հին Բռ. զանազան ձևով կ'ուզէ մեկնել (տե՛ս ՆՇԲ). բայց վերի վկայութիւնը կասկած չի թողուր որ բառը կը նշանակէ «բերանախեղճ, նա որ պահէ չի կրնար պահել և որովայնամուրութեամբ մեղէն ուտել կ'ուզէ»:

12. Ըմպախալոտ

Յաղաքս սխալայեղց և ըմպահալոտի մարդկային բնութեանս (էջ 189):

Կը նշանակէ «անսանձ, ապստամբ». կու գայ ըմպանիլ կամ ըմպանակիլ «ընդ-վել, ապստամբիլ» բայէն:

13. Ընդելու

Սոքա ձեռք ի ճշմարտութիւնն՝ առ կայծակն աստուածային հրոյն (այն է Ս. Հաղորդութեան) յանդգնագոյնս մերձեցեալք՝ ինքեանց ընդելով, և զմեղուցեալսն հաղորդեցուցանեն (էջ 392):

Եթէ սխալ գրչութիւն մը չէ, կը նշանակէ մերձաւորապէս «բաժին հանել, հայթայթել, մատակարարել»:

14. Լիկամ

Պատասխանի թղթին որ ի պապէն Հռոմայ բերաւ առ Թագաւորն Հայոց Հեթում, ի ձեռն իկաթին, որ կոչէր Տիմանչ, ի Թուխ Հայոց ի ՈՂԵ = 1246 (էջ 503): Նոյն բառը կը զանենք նաեւ Սմբ. պտմ. տպ. Փարիզ, էջ 94. Եւ եկն առ նա լեկաթն և խօսեցան ընդ միմեանս բան հաւ.

ւատոյ, և զոր ասաց հայրապետն՝ հաւանեցաւ լեկաթն: (Երկու տեղն ալ Մուկուայի տպագրութիւնը էջ 81 ունի լիկարե, իսկ փարիզները կը զնէ լեկարե, որ աւելի ուղիղ է): Բազմաթիւ անգամներ գործածած է Սկեռագին (Պատասխանիք, տպ. Երուսաղէմ, 1865), էջ 8-11, 19-20, 22, 25, 27, 31, 32, 34, 38, 43, 45 են՝ լիկար ձևով:

— Լտ. legatus «դեսպան, պատգամաւոր» բառն է և կը նշանակէ «պապական նուիրակ», ինչպէս կը հասկնայ նաև Շահնազարեան: Հմտ. նաև հիմերէն Մխ. Դանու. անդ՝ էջ 7. Եկն ի կողմանցն յիտալիոյ և ի Հայրապետէն Հովմայ լիկաթ ըստ լատինացոց բարբառոյ, որ թարգմանի ի լեզուս մեր դեսպան, բայց ներգործութեան նուիրակ»:

(Շարունակելի)

Հ. ԱՅՈՅՆՅԱՆ

Գ Ր Ա Կ Ա Ն

ՆԻԲԵԼՈՒՆԳՆԵՐՈՒՆ ԵՐԳԸ

□ ◻ ◻

(Շար. տես Բազմ. 1925, էջ 231)

ՎԵՅԵՐՈՐԴ ՊԱՏԱՀԱՐ

ԻՆՉՊԷՍ ԳՈՒՆԹԵՐ ԻՍԼԱՄԱՍ ԳՆԱՅ
ԲՐՈՒՆԶԻԼԳԻ ՀԱՄԱՐ

Նոր զբոյրցներ տարածուեցան Հռենի վրայ: Կան՝ կ'ըսէին՝ հեռուն չքնաղ շատ կոյսեր. Եւ քաջ Գունթերը կը խորհէր ունենալ շատ մ'անոնցմէ: Ասի բարի թընեցաւ. իր պետերուն՝ մարտիկներուն համարէն: Կար թագուի մը ծովերու վրայ նստած. Նէսը նրմանը չըկար ոչ մի երկիր: Տարապալման գեղեցկութիւն մ'ունէր նէ, Միանգամայն ունէր և մեծ գորութիւն: Տէգով նէ Ժիր քաջերուն հետ կը մրցըր. Բը կու գային իրեն՝ վառուած իր սիրով: Կը նետէր քար մ'հեռուն և երբ ետեւէն կը ցատքէր մեծ ոստումով: Ան որ կ'ըզմար

իր սիրոյն՝ պէտք էր որ երեք խաղի մէջ Յաղթահարէր անեղազոր այն տիկինն. Եթէ նոյն իսկ մէկ փորձին մէջ վերիպէր, Կը կտրուէր անոր զըլուխն ուսերէն: Բան մ'որ աղշնակը շատ անգամ ըրեր էր: Ասպետը զայն Հռենոսի ափն իմացաւ. Գիտէր զայն շատ լաւ, և սակայն իր հոգին կը դառնար միշտ դէպ ի այն կինը չքնաղ: Նէրա համար յետոյ անթիւ գիշարները Կորսնցուցին կենացընին: Ո՛ր մը Գունթերը Նստեր էր իր մարդերուն հետ միասին, Եւ ամէն ոք կը մըտածէր թէ ինչ կին Պիտի կրնար առնել իրեն՝ տէրն իրենց, Որ ըլլար թէ իրեն պատշաճ, թէ երկրին: Խօսեցաւ պետը Հռենոսի. «Կ'ուզեմ ես Կոյսը կտրել և Բրունհիլդի քով երթալ, Ինչ որ կ'ուզէ թող պատահի, փոյթըս չէ: Կենեքս որ սիրոյն համար կ'ուզեմ վրտանգել. Կ'ուզեմ մոռնիլ՝ եթէ չըլլայ նէ իմ կինս»: Ըսաւ Սիգֆրիդ. «Պէտք է որ միտքըդ փոխեմ. Զի այն բամբիշն ունի անգութ սովորոյթ, Որ շատ ուղի կ'ներստի անոր որ կ'ուզէ Տիրանալ իր սիրոյն: Շատ լաւ պիտի լլայ եթէ այդ անքը հրաժարիս ընելէ»:

Անոր Գունթերը արթայն տըլաւ պատասխան. «Երեք լըծնաւ կին մ'այնքան քաջ և հզօր, Որ մարտի մէջ՝ միայն ձեռքովս՝ չըկրնամ քանի նուանել»: — «Այդօրինակ մի խօսիք, Ըսաւ Սիգֆրիդ, ձեզ անծանօթ է իր ոյժն: Եթէ դուք չորս իսկ ըլլայիք, դուք պիտի ջըկրնայիք ինքզինքնիդ պահպանել Զարհուրելի իր մուրցքէն: Լըքեցէք Չեր Ժըրազիրը. ձեզ իբրեւ բարեկամ խորհուրդ կու տամ. դուք մահուընէ ճողպարիլ եթէ կ'ուզէք, թող չըզրաւէ ձեզ իր սէրն Եւ չըքաշէ չըտանի ձեզ կորուստի»:

— Նէ թող ըլլայ զօրաւոր՝ որչափ կ'ուզէ, Պիտի չկենամ ետ Բրունհիլդի երթալէ, Նզըս չէ ինչ ալ որ ինծի հանդիպի: Իր շնաչխարհիկ գեղեցկութեանը համար Պէտք է ամէն բան փորձեմ. թերեւս ուզէ՝ եթէ Աստուած՝ հետըս Հռենի անփը զայս:

— Ահա խորհուրդս, ըսաւ Հազէն, Սիգֆրիդին Աղաչեցէք, որ վիցընէ ձեզի հետ Այդ Ժանըր բռն. իմ կարծիքս այս է, զի ան Գիտէ թէ ինչ վիճակի մէջ է այն կինն»:

Ըսաւ Գունթեր. «Կ'ուզեմ օգնել դուն ինծի, Ազնիւ Սիգֆրիդ, որ տիրանաւ այդ գեղին: Ըրէք քեզ ինչ որ կ'այնչեմ. Եւ չքնաղ Այդ գեղն ինծի ես եթէ կին ունենամ,